



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 3 ՓԵՏՐՈՒԱՐ, 2020

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԷԼ ԵՆ ԽՍՍԷԼ ԵՆ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալս զԻ. Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 100

ԵՐԳ ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Տիրոջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ:  
Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ,  
ցնծութեան երգերով եկէք անոր ներկայութեան:  
Գիտցէք թէ Տէրը ինքն է Աստուածը:  
Ան մեզ ստեղծեց, եւ մենք անորն ենք.  
Իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ ինք կ'արածէ:  
Գոհաբանութեամբ մտէք անոր փաճարը,  
օրհներգութեամբ մտէք անոր շրջափակէն ներս.  
Չնորհակալութիւն յայտնեցէք իրեն,  
օրհնաբանեցէք իր անունը:  
Բարի է Տէրը, անոր սէրը յաւերժական է,  
եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւաքարմութիւնը:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիանալաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԹԸ



### ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄԻՆ ԵՐԵՄԻԱՅԻ

23:1-20 ԳԼՈՒԽ

#### ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ ՅՈՅՍ (23:1-8)

Հակառակ գալիք պատիժին, որովհետև Տէրը բարի է, Անոր սերը յաւերժական է, ու մանաւանդ Իր հաւաքարմութիւնը կը ցուցաբերէ բոլոր սերունդներուն, ինչպէս կ'ըսէ Սաղմոսերգուն, ահա յոյս մըն է որ կու տայ Տէրը Երեմիային, որպէսզի Երեմիան փոխանցէ զայն ժողովուրդին: Սա ցոյց կու տայ, թէ գալիք պատիժը ուրիշ բան չէ եթէ ոչ ազդարարութիւն, դարձի ու ապաշխարութեան առիթ, զգաստութեան հրաւեր:

23րդ գլուխը կը սկսի «վայ»ով, այն նոյն «վայ»ը, որ Քրիստոս օգտագործեց երբ իր խօսքը ուղղեց փարիսեցիներուն (Մտթ 23): Իսրայելի ժողովուրդը Աստուծոյ հօփն է, ուստի այդ հօփը արածելու համար Տէրը հովիւներ նշանակեց, չհաշուած, որ ճշմարիտ Հովիւը Տէրը ինքն է, ինչպէս դարձեալ Քրիստոս պիտի ըսէ. «**ես եմ ճշմարիտ հովիւը**» (Յովի 10:11): Այդ հովիւներուն պարտականութիւնն էր արածել, պահել ու ի մի հաւաքել Աստուծոյ շուրջ: Ըստ երեւոյթին անոնք չէին կրցած ընել իրենց պարտականութիւնը, անոր համար ալ Տէրը վայ կը կարդայ անոնց. «**վայ այն հովիւներուն, որոնք Իմ ոչխարներս ցրուեցին ու զանոնք վնասեցին, ու անոնց հոգ չտարին**» (2 հմբ): Այս պարագային հովիւը իր երկու իմաստներով՝ քաղաքական եւ կրօնական, որովհետև ի վերջոյ, թագաւոր կամ կրօնաւոր, երկուքն ալ Աստուծոյ ներկայացուցիչն են, Աստուծոյ կողմէ նշանակուած: Ահա իրենց ապականած ըլլալուն պարճառով Տէրը պիտի պարժէ, ու ոչխարներուն մնացորդն ալ պիտի հաւաքէ զանոնք վերադարձնելով իրենց փարախները ուր պիտի աճին ու շարման (3 հմբ): Անոնք փոխանակ հոգ փանելու ժողովուրդին, ընդհակառակը ճնշեցին, որուն պարճառով ժողովուրդը ցիրուցան եղաւ: Փոխանակ կերակրելու, պաշտպանելու, ընդհակառակը կողոպտեցին, անարդարութեամբ վարուեցան: Անոնք փոխանակ ճշմարիտ աստուածապաշտութեան վարժեցնելու ու դաստիարակելու ժողովուրդը, օտար աստուածներու ու կռապաշտութեան առաջնորդեցին: Տէրը պիտի պարժէ, ու անոնց փոխարէն նոր հովիւները պիտի նշանակէ, որոնք պիտի չվախնան (4 հմբ): Ահա Տէրը ապագային կապուած խոստումն ալ կու տայ ըսելով. «**Ահա օրեր կու գան, երբ Դաւիթէն արդարութեան Շարափղ մը պիտի հանեն, որ թագաւորի պէս թագաւորութիւն պիտի ընէ, իմաստութեամբ պիտի վարուի, երկրի վրայ իրաւունք եւ արդարութիւն պիտի ընէ: Անոր օրերը Յուդան պիտի ազարի, եւ Իսրայելը ապահովութեամբ պիտի բնակի: Անոր անունը պիտի կոչուի "ՏԷՐԸ, ՄԵՐ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՄԻՆԸ"**» (5-6 հմբ): Այս պարգամը ուրիշ բան չէ եթէ ոչ կապուած Քրիստոսին, գալիք Մեսիային, որ ինք պիտի ըլլար ճշմարիտ Հովիւը, Թագաւորը, ու Քահանայապետը, արդարութեամբ ու իմաստութեամբ հովուելու Աստուծոյ ժողովուրդը: Քրիստոսի թագաւորութեան օրերուն, Աստուծոյ ժողովուրդը պիտի ազարի մեղքի սարկութենէն, ու ապահովութեամբ ապրի մեղքի լուծէն:

#### ԵՐԵՄԻԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԸ ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ (23:9-20)

Մարգարէն սրտցաւով կ'արտայայտուի այս բաժինը ցոյց փալով, թէ ինչպէս սուր մարգարէներ, որոնց պիտի յաջորդեն նաեւ քահանաներ, մարգարէութիւններ ըրին, որպէս թէ իրենց պարգամները առնելով Աստուծմէ, սակայն, ոչ մէկ ճշմարտութիւն այդ բոլորի մէջ, այլ ընդհակառակը՝ իրենց սուր մարգարէութիւններով կը մոլորեցնէին ժողովուրդը որպէս թէ այդ պարգամները Աստուծմէ ըլլային: Նոյն զգուշացումը Քրիստոս Ինք եւս կ'ընէ Իր աշակերպներուն եւ գալիք սերունդին, ըսելով. «**սուր քրիստոսներ եւ սուր մարգարէներ պիտի ելլեն եւ մեծ հրաշքներ ու նշաններ կատարեն, որպէսզի մոլորեցնեն, եթէ կարենան, նոյնիսկ Աստուծոյ ընտրեալները**» (Մտթ 24:24): Ահա այսպիսի կացութեան մէջ է Իսրայելը սուր մարգարէներով, որոնց կեանքի ընթացքը ոչ միայն իրենք մոլորած, այլ նաեւ ամբողջ ազգ մը մոլորութեանց գիրկը առաջնորդող: Այս իսկ պարճառով անոնց ու ժողովուրդին գլխուն գալիքը, որ այնքան ահաւոր է, որ մինչեւ Երեմիա մարգարէն կը նմանի այն գինով մարդուն, որ այլեւս չի կրնար փրամաքանել ու մրածել:

Ահա մարգարէներն ու քահանաները Աստուծոյ աչքին խոտորեցան ու մոլորեցուցին ժողովուրդը, Աստուծոյ անունով սուր մարգարէութիւն ընելով: Անոր համար ալ Տէրը կը զգուշացնէ զիրենք, ըսելով. «**Ձեզի մարգարէութիւն ընողներուն խօսքերուն մրիկ մի ընէք, անոնք ունայնութեան կը փանին ձեզ, իրենց սրտին փեսիլքը կը խօսին, ոչ թէ Տիրոջ բերնէն**» (16 հմբ):